# ԱՆՑԱՎՈՐ ԱՇԽԱՐՀ

Չափավոր

Մահուբի Գևորգ




ԱՆՑԱՎՈՐ ԱՇԽԱՐՀ

Ավա՜ղ, հազար ավաղ իմ աշխարհ գալը,
Բոլորն անցավոր են, ես ո՞ւր մնացի,
Փոքր պարտեզի տեր կուզե դառնալ,
Ահագին այգու մեջ ես ղուր մնացի։

Մեծ պատիվ ունեի ամեն մի խմբում,
Շատ փափագներ թերի մնաց իմ սրտում,
Ոմանք մանկունքներով պար էին խաղում,
Ես իմ նստած տեղը տխուր մնացի։

ՈՎ ՄԱՀՈՒԲԻ ԳԵՎՈՐԳ, ո՞ւր է քո պարգև,
Նորից բուսած վարդը բաց արել տերև,
Բոլոր ծաղկունակաց ցողում է անձրև,
Ես մի անկյունումը անջուր մնացի։